ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի կողմից Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շարունակվող շրջափակման հետևանքով բարոյական, նյութական, տնտեսական և քաղաքական բնույթի դժվարահաղթահարելի վնաս է պատճառվում։

Սեպտեմբերի 25-ի գիշերվանից սկսած մեր հանրապետության երկաթուղային պատուհանը մի փոքր բացվեց, բայց այդ երևույթը առայժմ կանոնավոր բնույթ չի ստացել. երեք օրվա ընթացքում (սեպտեմբերի 25—27) հարևանների կողմից ստացվել է ընդամենը 1940 վագոն, ինչը կազմում է սահմանված ամենօրյա նորմայի (օրական 1340 վագոն) 48.2 տոկոսը։ Բացի դրանից, ստացված բեռների կազմից առավելապես բացակայում է վառելիքը, ինչը կազմալուծում է բեռները բեռնաթափելու և դրանք կենտրոն բաշխողներին հասցնելու պրոցեսը։ Փաստորեն շրջափակումը չի վերացված և վստահություն չկա, թե ամենամոտ ժամանակներս կվերացվի։

Այդ ամենը շատ ծանր կացության մեջ է դնում հանրապետության ժողովրդական տնտեսությունը։ Ընդ որում, տուժում են մեր գործընկերները երկրի մյուս ռեգիոններում և արտասահմանում։

Կորուստներ են կրում հանրապետության ժողովրդական տնտեսության փաստորեն բոլոր ճյուղերը. շրջափակումը անդրադառնում է նաև բնակչության կենսապահովման վրա։ Հիմնական ճյուղերում ստեղծված տնտեսական վիճակը հետևյալն է.

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 1-ից մինչև 24-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից մեր հանրապետությունը նորմայի դիմաց չի ստացել 28,1 հազար բեռնված վագոն, իսկ սեպտեմբերի 27 օրերի ընթացքում Նոյեմբերյան ու Իջևանի կողմից ստացվել է 6118 վագոն՝ նորմայով նախատեսված 36180-ի դիմաց, ինչը կազմում է ընդամենը 16,9 տոկոս. պակաս են ստացվել 1352,7 հազար տոննա ծավալով զանազան բեռներ։ Այդ ժամանակամիջոցում ստացվել է նավթամթերքով բեռնված ընդամենը 699 վագոն կամ նորմայի 10,0 տոկոսը. պակաս է ստացվել 254,4 հազար տոննա նավթամթերք, այդ թվում «Հայնավթամթերք» առևտրաարտադրական միավորման գծով՝ 45,8 հազար տոննա բենզին, 22,1 հազար տոննա դիզելային վառելիք, 92,3 հազար տոննա մազութ։ Պետմատակարարման գծով չեն ստացվել 30,0 հազար խորանարդ մետր փայտանյութ, 200,0 հազար տոննա ցեմենտ, 25,0 հազար տոննա սև մետաղների գլանվածք։ Վառելիքի խիստ պակասի պատճառով զգալի վնաս է կրել նաև ավտոմոբիլային տրանսպորտը, որի կորուստները կազմել են 12 միլիոն ռուբլի։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երկրաշարժի գոտում օբյեկտների շինարարության ընթացքը աղետալի վիճակում է։

Այսպես, 1989 թվականի սեպտեմբերի 8-ից սկսած Կիրովականը չի ստացել զանազան բեռներով, հիմնականում ավերված օբյեկտների շինարարության համար նախատեսված հումքով, շինանյութերով, վառելիքով, սարքավորումներով բեռնված 4500 վագոն։ Մասնավորապես, «Կիրովականտրանսշինարարական» միավորումը պակաս է ստացել 1400 վագոն, «Լենինականշին» տրեստը՝ 300 վագոն, պակաս է ստացվել նաև 3100 վագոն, որոնք նախատեսված էին ուրիշ կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքի կենսապահովման համար։

Հումքի և նյութերի մատակարարումների ձախողման հետևանքով Սպիտակի շրջանին հասցված վնասը կազմել է 10 միլիոն ռուբլի։ Պակաս է ստացվել զանազան բեռներով բեռնված 3000 վագոն։ [illegible] ավելին քան է, որ պակաս են ստացվել բնակչության համար նախատեսված տնակներ ու վագոնիկներ, որոնց մեծ կարիքն ունի, մոտենում ձմռան շրջանում։ Մարդկանց մեծ մասը (երեխաներ, ծերեր, հիվանդներ) ապրում է վրաններում։ Սեփական ցանկությամբ աշխատանքից մարդկանց ազատվելը և այլուր մեկնելը մեծ մասսայական բնույթ են ստանում։

Դրությունը բնավ էլ լավ չէ ներկայումս կառուցվող վերականգնման և շինարարական աշխատանքներում։ «Հայգյուղարդյունաբերաշինարարական» միավորումում շինմոնտաժային աշխատանքների ծավալների կատարումը խափանվում է հումքի և շինանյութերի թերմատակարարումով։ Այսպես, 26 հազար տոննա ցեմենտի հայտի դիմաց (որը վաղուց առաքված է լրիվ ծավալով) ստացվել է ընդամենը 3.5 հազար տոննան։ Պակաս են ստացվել փայտանյութ, ապակեբամբակ, հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներ։

«Ավտոճանապարհաշինարարական» տրանսպորտաշինարարական միավորումում ստացվել է անցած ժամանակաշրջանում հանձնարարված բեռների ընդամենը 20 տոկոսը, «Մայրուղաշինարարական» տրանսպորտաշինարարական միավորումում՝ մոտավորապես 30 տոկոսը։ «Հայճանապարհաշին» տրանսպորտաշինարարական միավորումը պակաս է ստացել 300 տոննա մետաղ, 10 վագոն փայտանյութ, 5 վագոն ապակեբամբակ, 10 հազար խորանարդ մետր ավազ, 1200 քառակուսի մետր «Սենդվիչ» տիպի պանել։

Ընդհանուր առմամբ փոքր չեն ֆինանսավորման դժվարությունները հանրապետական ավտոճանապարհներում։ Կանգնած է միայն «Ավտոշինարարական» մասնագիտացված տեղամասի աշխատանքը, բանվորները զբաղված են երկրորդական գործերով, որոնցով շահագրգռված չեն։ Կան բանվորների ազատվելու դեպքեր։ Տեխնիկայի կազմը հիմնականում անգործ է մնում։

Գրանցված են ջարդված ու կողոպտված վագոններ կայարան մուտք գործելու փաստեր, ցեմենտի հետ ջուր խառնած գնացքը։

Նավթագազաշինմոնտաժային կազմակերպությունները, որոնք աշխատում են աղետի գոտում, վերջին երեք ամսում թերակատարել են մոտ վեց միլիոն ռուբլու ծավալի շինմոնտաժային աշխատանքներ։ Պակաս են ստացվել 18 հազար տոննա բեռներ, հիմնականում հումք, շինանյութեր, վառելիք։ Վառելիքի պակասի պատճառով չի աշխատում ավտոպարկը։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Շրջափակումը երկակի բնույթ է կրում. նախ՝ այն հարվածում է ձեռնարկությունների արտադրական ծրագրերին, քանի որ հումքային ռեսուրսներ չեն բավարարվում, երկրորդ՝ պատրաստի արտադրանքի առաքման հնարավորություն չլինելու պատճառով հանրապետության ձեռնարկությունները ակամա խախտում են մատակարարումների իրենց պայմանագրային պարտավորությունները, դրանով իսկ դժվարին կացության մեջ դնելով ոչ միայն իրենց (մատակարարումների ձախողման համար վճարվող տույժեր, հսկայական վարկի կորուստ), այլև երկրի ուրիշ ռեգիոնների համագործակցող ձեռնարկություններին ու դրանց կոլեկտիվներին, որոնց հետ նրանք կապված են կենսական պայմանագրերով (ցավոք, հարևանների և կենտրոնի անհետևողականության ու անտարբերության պատճառով այդ պայմանագրերի թիվը համարյա կարճվել է, և երաշխիք չկա, թե դրանք նորից կկնքվեն)։

Ամբողջությամբ վերցրած, հանրապետության արդյունաբերության մեջ, ամենահամեստ հաշվումներով, շրջափակման օրվանից սկսած ժամանակամիջոցում արտադրանքի կորուստները ձեռնարկությունների արտադրական ծրագրերի դիմաց կազմել են 150 միլիոն ռուբլի, որից մոտ 85 միլիոն ռուբլին բաժին է ընկնում սեպտեմբերին, իսկ այդ նույն ժամանակամիջոցում սպառողները պակաս են ստացել 120 միլիոն ռուբլու արտադրանք (այդ թվում երկրի ուրիշ ռեգիոններից՝ 50 միլիոն ռուբլու), որից ավելի քան 80 միլիոն ռուբլու արտադրանքը չի առաքվել սեպտեմբերին։

«Լույս» միավորումում շրջափակման հետևանքով այս ամսում պակաս են ստացվել 5.5 միլիոն ռուբլու նյութեր, իսկ մնացած պաշարները կբավականացնեն ընդամենը 5—6 օր. պահեստներում կուտակվել է 6 միլիոն ռուբլու պատրաստի արտադրանք, որը սպառողներին առաքելու հնարավորություն չկա, պայմանագրերը չկատարելու համար տույժերը կազմել են 1.0 միլիոն ռուբլի։

«Հայէլեկտրամեքենա» միավորումում պաշարների որոշ տեսակներ սպառված են, կուտակվել է երեք միլիոն ռուբլու պատրաստի արտադրանք, մինչև ամսվա վերջը սպառողներին չի առաքվել մոտ 5 միլիոն ռուբլու արտադրանք։

«Անալոգհամակարգիչ» միավորումում, որը փաստորեն չի աշխատում արդեն երկու օր, թերառաքումը կկազմի 13,4 միլիոն ռուբլի, չեն ստացվել 5 միլիոն ռուբլու նյութեր, պահեստներում կուտակվել է 2 միլիոն ռուբլու արտադրանք։

Կանգնեցման սպառնալիքի տակ են Երևանի մաքուր երկաթի գործարանը, կոշիկի «Մասիս» ֆիրման, արհեստամորթի-ձեռնոցի ֆաբրիկան, ալրաղաց և համակցված կերի ձեռնարկությունները, կանգ են առել Կամո քաղաքի գուլպայի ֆաբրիկան, [illegible] և «Ախուրյան» տրիկոտաժի միավորումները։

Հաստոցաշինության մինիստրության ձեռնարկությունները շրջափակման պատճառով չեն ստացել 1.0 հազար տոննա պողպատ, 2.0 հազար տոննա պինդ տարերի գլանվածք և 45.0 հազար տոննա ցեմենտ։ Ցեմենտի պաշարներ են մնացել (հաշվի առնելով անհետաձգելի պետական պատվերը) մեկ ամսվա աշխատանքի համար, բայց արդեն բենզինի բացակայության պատճառով ծառանում է դրանց ներհանրապետական փոխադրման պրոբլեմը։ Պետագրոարդի ձեռնարկությունները սեպտեմբերին հանրապետությունից դուրս չեն առաքել 20 միլիոն ռուբլու գինի, 500 տոննա կերակրի աղ. Մասիսի, [illegible] և [illegible] գործարաններում լցավորվել է 500 հազար ռուբլու գինենյութ։ Կոնյակի շարքախանելու վնասը կազմել է 50.0 հազար պետբյուջետային ռուբլի։

Ըստ այսօր Հայկական ԽՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության ձեռնարկությունների պահեստներում (առանց հաշվի առնելու տեղական ձեռնարկությունները) կուտակվել է 23 միլիոն ռուբլու պատրաստի արտադրանք, որի հետևանքով երկրի շատ սպառողներ չեն ստանա կարվածքեղեն, տրիկոտաժ, կոշիկ, գուլպեղեն, այդ թվում՝ մանկական տեսականու։ Ամբողջությամբ վերցրած, մինիստրության գծով մինչև ամսվա վերջը չի առաքվել 40 միլիոն ռուբլու և չի արտադրվել 50 միլիոն ռուբլու արտադրանք։

Ծանր հետևանքներ ունեցավ նաև այն, որ ձեռնարկությունների պահեստներում կուտակվել են ժողովրդական սպառման արտադրված ապրանքների զգալի պաշարներ, որոնք շրջափակման պատճառով չեն կարող սպառողին հասնել ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս։

Մասնավորապես, ժամանակավորապես հնարավորություն չկա երկրի ուրիշ ռեգիոնների սպառողներին առաքել 6.0 հազար մահճակալ, 24,0 հազար [illegible], 875 «Դիանա» կարի մեքենա, 105,0 հազար կենցաղային ժամացույց, 265 ավտոտրանսֆորմատոր և կոմպրեսորային ու տնտեսական մի շարք ուրիշ ապրանքներ։ Հանրապետության թեթև արդյունաբերության համակարգում ուրիշ հանրապետություններ առաքվելու հերթին ժամին է սպասում 42 միլիոն ռուբլու արտադրանք, սննդարդյունաբերության համակարգում՝ 21 միլիոն ռուբլու, «Հայտեղարդ» առևտրաարտադրական միավորման համակարգում՝ մեկ միլիոն ռուբլու։ Իսկ ամբողջությամբ վերցրած (1989 թվականի սեպտեմբերի 26-ի դրությամբ) հանրապետության սահմաններից դուրս առաքման են սպասում ավելի քան 85 միլիոն ռուբլու ժողովրդական սպառման ապրանքներ, որից 10 միլիոնը միութենական ենթակայության ձեռնարկությունների և 75 միլիոնը հանրապետության մինիստրությունների ու գերատեսչությունների ձեռնարկությունների արտադրանքն է։ Ստեղծված պայմաններում նպատակահարմար է թվում այդ արտադրանքների իրացումը (դրանցից շատերը սուր դեֆիցիտային են) հանրապետության ներսում։

Շրջափակման հետևանքները զգացվում են արդեն բավական հեռանկարային կերպով, բայց էլ ավելի շոշափելիորեն դրանք կզգացվեն տարեվերջին։ Շատ ձեռնարկություններ արդեն հիմա սահմանված կարգով դիմում են, առաջարկելով պլանները ճշգրտելով նվազեցնել, դրանք փոխադրելով 4-րդ եռամսյակ։ Այդ առաջարկությունների ընդունման դեպքում 4-րդ եռամսյակի պլանը (հաշվի առնելով հունիս-օգոստոսին տեղի ունեցած ճշգրտումները) կնվազի մոտավորապես 5—6 տոկոսով, որը դրա կատարման զգալի դժվարություններ կառաջացնի։ Բացի դրանից, նման լարված պլանի դեպքում չի երաշխավորվում թողարկվող արտադրանքների համապատասխան որակը, որի հետևանքով տնտեսական կորուստները կտրուկ կաճեն։

Ինչ վերաբերում է երրորդ եռամսյակի և ինն ամսվա պլանների կատարմանը, դրանք զգալիորեն կթերակատարվեն։ Ամբողջությամբ վերցրած, արդյունաբերության մեջ հունվար-սեպտեմբերի պլանը (առանց հաշվի առնելու ճշգրտումները) մատակարարումների գծով կթերակատարվի մոտավորապես 4 տոկոսով, պակաս կառաքվի մոտ 200 միլիոն ռուբլու արտադրանք, իսկ արտադրանքի արտադրության ծավալը կկազմի անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի մակարդակի 87—88 տոկոսը։

ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Ադրբեջանի ձեռնարկած շրջափակման հետևանքով հանրապետությունում մեծապես վտանգված է գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը։

Այսպես, 1989 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 27-ը ընկած ժամանակահատվածում վառելիքաքսուքանյութերի և պարարտանյութերի բացակայության պատճառով հնարավոր չի եղել ժամանակին հավաքել հացահատիկը 1,5 հազար հեկտար, եգիպտացորենը՝ 2,0 հազար հեկտար, բանջարեղենը՝ 1,0 հազար հեկտար մակերեսի վրա, չի հնձվել ավելի քան 6,0 հազար հեկտար ցանված ու բնական խոտ, չի կուտակվել ավելի քան 14,0 հազար տոննա սիլոս, 1,0 հազար տոննա խոտալյուր և այլն։

Ձգձգվում են բերքահավաքը, կերի կուտակումը, աշնանացանը և ցրտահերկը։ Չեն ստացվել հանքային պարարտանյութեր, և աշնանացանը կատարվել է առանց դրանց կիրառման։

Հյուսիսային Կովկասում պետք է կուտակեին 150 հազար տոննա ծղոտ, կուտակվել է 90,0 հազար տոննա, երկաթուղիների փակման պատճառով փոխադրվել է միայն 9,2 հազար տոննա։

Տնտեսություններում արտադրված կաթը երկար ժամանակ չի փոխադրվում մթերող կազմակերպությունների կողմից և քանի որ հանրապետության տնտեսությունները լիովին չեն ապահովված սառնարանային կայանքներով, փչանում են կաթի տեսակայնությունն ու որակը, որի հետևանքով կորուստները կազմել են մոտ 0,6 միլիոն ռուբլի։ Մյուս շատ փչացող մթերքների (հատկապես բանջարեղենի ու խաղողի) նույն պատճառների հետևանքով կորուստները կազմել են 0,7 միլիոն ռուբլի։

Ստեղծված վիճակը անչափ բացասաբար է ազդում նաև գյուղմթերքների մթերումների պլանի կատարման վրա։ Այսպես, 1989 թվականի սեպտեմբերի 25—26-ի դրությամբ կարտոֆիլի գնումների պլանը կատարվել է 36,3 տոկոսով, բանջարեղենինը՝ 58,5, պտուղներինը՝ 35,5, բոստանային մշակաբույսերինը՝ 59,5, խաղողինը՝ 18,2, հացահատիկինը՝ 68,1 տոկոսով։ Շրջափակման ժամանակամիջոցում հանրապետությունում չի գնվել 20 հազար տոննա պտուղ, 32,0 հազար տոննա բանջարեղեն, 26,0 հազար տոննա խաղող և այլն։

Անբավարար վիճակում է հանրապետության բնակչության ապահովումը գյուղատնտեսական մթերքներով։ Այսպես, այդ ժամանակամիջոցում հանրապետությունը համամիութենական ֆոնդից պակաս է ստացել 5,0 հազար տոննա կարտոֆիլ, 5,0 հազար տոննա բոստանային մշակաբույսեր, 3,0 հազար տոննա գլուխ սոխ, 100 տոննա սխտոր, 2,6 հազար տոննա միս (սպանդային քաշ), 3,8 հազար տոննա կարագ, 3,8 հազար պայմանական տուփ կաթի պահածո։ Վերջին օրերին ստացվել է 80 տոննա կարտոֆիլ, որը ճանապարհին երկար մնալու հետևանքով լիովին փչացել է։

Վերևում ասվածը հանրապետության շուկաներում գների ընդհանուր բարձրացման պատճառ է դարձել։

Հանրապետությունը համամիութենական ֆոնդին պակաս է մատակարարել 2860 տոննա պտուղ, 2,5 հազար տոննա խաղող, 3,6 հազար տոննա բանջարեղեն՝ 1,5 միլիոն ռուբլի ընդհանուր գումարով։

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՈՒՄ

Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղիների տևական շրջափակման հետևանքով հանրապետությունում չեն ստացվել ավելի քան 18 միլիոն ռուբլու պարենային ապրանքներ, այդ թվում 5 միլիոն ռուբլու շաքար, մեկ միլիոն ռուբլու ձուկ և ձկնամթերք, 8 միլիոն ռուբլու պահածոներ, միս, կենդանական և բուսական յուղ, ալյուր, աղ, լուցկի և այլն։ Նույն պատճառով չեն ստացվել ավելի քան 100 միլիոն ռուբլու ոչ պարենային ապրանքներ, այդ թվում շինանյութեր բնակչության համար՝ 27 միլիոն ռուբլու, կոշիկ՝ 18 միլիոն ռուբլու, հագուստ՝ 6 միլիոն ռուբլու, դեղամիջոց՝ 2.5 միլիոն ռուբլու և այլն։

Բացի դրանից, հանրապետությունում վառելիքի պակասը հանգեցրել է հանրապետության կենսապահովման գործունեության, նախ և առաջ՝ բնակչության պարենավորման խախտումների։

Այսպես, մանրածախ առևտրի ցանցում չեն ստացվել ավելի քան 20 միլիոն ռուբլու պարենային ապրանքներ, կենսականորեն կարևոր այնպիսի մթերքներ, ինչպիսիք են հրուշակեղենը (2.4 միլիոն ռուբլու), կենդանական յուղը (1.5 միլիոն ռուբլու), մակարոնեղենը (ավելի քան 0.6 միլիոն ռուբլու), ձուկը (1 միլիոն ռուբլու), ալյուրը և ձավարեղենը (մոտ 1 միլիոն ռուբլու) և այլն։

Միայն վերջին օրերին դաշտերից մանրածախ առևտրի ցանց չի ստացվել 4000 տոննա կարտոֆիլ, 600 տոննա կաղամբ, 530 տոննա գլուխ սոխ։

Նկատելիորեն դատարկվել են խանութների վաճառասեղանները, երկար հերթեր են գոյանում հացի և ձավարեղենի համար, վաճառքում չկան բրինձ և մակարոնեղեն, լուցկի և այլ ապրանքներ։

Այսպիսով, շրջափակումը շարունակվում է և ազդում հանրապետության կենսագործունեության վրա՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։

Հայկական ԽՍՀ վիճպետկոմ